

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ



---

Հեռավար ուսուցման վերաբերյալ դասախոսների շրջանում անցկացված  
խորքային հարցման վերլուծություն

---

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Հեռավար ուսուցման վերաբերյալ դասախոսների շրջանում անցկացված  
հարցման վերլուծություն**

**14.07.2020թ.**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման և կրթության անընդ-հատությունն ապահովելու նպատակով մարտի 23-ին անցել է առցանց դասավանդման՝ օգտագործելով տեղեկատվական և հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլո-գիաները և ուսումնական հարթակները:

Բուիում իրականացվող հեռավար ուսուցման կազմակերպման հնարավորություն-ները, առցանց կրթության արդյունավետությունն ու արձանագրված խնդիրները ուսում-նասիրելու նպատակով ՀՖԿՍՊԻ-ի Որակի ապահովման բաժինը հեռավար ուսուցման անցնելուց մեկ ամիս անց իրականացրել է ուսանողական առցանց հարցում՝ բուհի երկու ֆակուլտետի 1-4-րդ կուրսերի ուսանողների շրջանում, իսկ հեռավարի մեկնարկից 2 ամիս անց ֆակուլտետի դեկանի նախաձեռնությամբ առցանց ուսուցման վերաբերյալ անցկացվել են հարցումներ նույն ֆակուլտետի 7 ամբիոնների դասախոսների շրջանում:

Դասախոսները լրացրել են իրենց տրամադրված առցանց ուսուցման վերաբերյալ տեղեկության հավաքագրման հարցաթերթիկները, որոնք ամբիոնի կողմից ներկայացվել են դեկանին ինչպես ընդհանրացված տեսքով, այնպես էլ անհատական:

Նշենք, որ յուրաքանչյուր շաբաթվա վերջին դասախոսները ներկայացրել են նաև հաշվետվություն իրենց կատարած աշխատանքների մասին, որն ամփոփվել է ամբիոնի վարիչի կողմից:

Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել է լրացված հարցաթերթիկների վերլուծություն, որը հիմք կհանդիսա հեռավար ուսուցման առանձնահատկությունները, դրա հետ կապված խնդիրները, հետագա բարելավումները հաշվի առնելով՝ իրականաց-նել դասավանդման որակի խորքային գնահատում:

**Հարցման նպատակն էր՝**

1. Հավաքագրել տվյալներ առցանց ուսուցման պրոցեսում առկա խնդիրների, կիրառված դասավանդման այլընտրանքային մոտեցումների ու մեթոդների վերաբերյալ, աջակցել դասախոսներին ոչ միայն խուսափելու կրթության որակի վրա բացասական ազդեցություններից, այլև զարգացնել և կատարելագործել ավանդական կրթության պայմաններում առցանց ուսուցման արդյունքում կուտակված լավ փորձը:

Հարցաթերթիկը բաղկացած էր 6 հարցից, այդ թվում մեկ բաց հարցից, որը դասախոսին հնարավորություն էր տալիս ազատ արտահայտվելու, կարծիք հայտնելու: Առաջին հարցը կապված էր դասընթացի օնլայն անցկացման ժամանակ առաջացած դժվարությունների հետ:

**1. Դասընթացի օնլայն անցկացման ժամանակ ի՞նչ բարդություններ են առաջացել** հարցին հարցմանը մասնակցած 7 ամբիոնների դասախոսների ընդհանրացված կարծիքը հետևյալն է՝

Սկզբնական շրջանում հիմնական բարդությունները կապված էին անփորձության, ուսանողներին հավաքագրելու հետ (բացակայում էին ուսանողների email-ը, չկար ուսանողների ցուցակ ըստ կուրսի և խմբի), «Zoom» հարթակում ընդգրկելու, աշխատանքի սկզբունքներին, գործիքների կիրառման, համացանցի հնարավորություններին ծանոթացնելու հետ, ինչպես նաև տեխնիկական խնդիրների հետ (ընդհատվող կապը, ձայնի կամ պատկերի մասնակի կամ ամբողջովին ընդհատումը՝ հատկապես սահմանամերձ շրջանների ուսանողների համար լուրջ խնդիրներ է առաջացրել): Խնդիր էր լաբորատոր փորձերի, մարդկային անմիջական շփման բացակայությունը, անհրաժեշտ էլեկտրոնային գրականությունից օգտվելը: Չենք կարող անտեսնել նաև ուսանողների թույլ ինքնակազմակերպման, աշխատանքը ինքնուրույն կազմակերպելու հմտությունների պակասի խնդիրը:

Փորձենք մի փոքր մասնավորեցնել.

Ֆիզիոլոգիայի ամբիոնի դասախոս Կ. Դանիելյանի կարծիքով խնդիր է, երբ ուսանողը տեսականորեն ծանոթանում է փորձերի կատարման մեթոդիկայի մանրամասն նկարագրությանը, սակայն չի կարող հետազոտություն իրականացնել, արդյունքները վերլուծել և գնահատել: Հ. Աղաբաբյանը գտնում է, որ բացակայում է դասախոսի կողմից ուսանողին հսկելու և օբյեկտիվ գնահատելու հնարավորությունը:

«Ուսանողներից շատերը դասի ամբողջ ընթացքում անջատում են իրենց տեսախցիկները և ձայնը, ինչը վերածում է դասախոսությունը մենախոսության», -նշել է Կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոս Ա. Օհանջանյանը:

Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Ա. Հարությունյանի կարծիքով ուսուցման ընթացքում ակնհայտ խնդիրներ չեն գրանցվել: Փորձել է պահպանել առարկայի ծրագրային նյութի բովանդակության հաջորդականությունը, դասերն անցկացրել է արդեն իսկ պատրաստ դասախոսությունների էլեկտրոնային տարբերակով՝ share screen-ի օգնությամբ:

Սոցիոլոգիայի դասախոս Ք. Ալեքսանյանի կարծիքով եղել են բարդություններ որոշ գործնական դասերի հետ:

Գործնական դասերի բարդությունը տեսնում ենք նաև «Մերսման հիմունքներ» առարկայի շրջանակում, ինչպես նշել է դասախոսը՝ Ն. Խաչատրյանը, գործնական դասն անցկացվել է օնլայն և գործնականում հնարավոր չի եղել ցուցադրել հնարքները, հետևաբար ուսանողները չէին կարող լիարժեք պատկերացում կազմել հնարքների ճիշտ կատարման տեխնիկայի մասին:

Այսինքն, խնդիրները քիչ չէին, ինչը փաստում էին նաև ուսանողները հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ առցանց ուսանողական հարցման ժամանակ. եղել են տեխնիկական խնդիրներ՝ համակարգչի, ինտերնետի բացակայություն, ուսանողների՝ ուսուցման նոր միջավայրին հարմարվելու դժվարություններ, անբավարար գիտելիքներ ու հմտություններ տեխնիկական միջոցներից օգտվելու համար, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների կարիք ունեցող ուսանողներ և այլն:

Դեռևս ամբիոնների կողմից լրացուցիչ հարցապնդումներ չեն արվել պարզելու՝ նոր ուսումնական տարին հեռավար ուսուցմամբ իրականացնելու դեպքում շարունակելու ենք ունենալ նմանատիպ խնդիրներ կամ ինչ քայլեր են արվել բացահայտված խնդիրներին լուծում տալու համար:

**2.Ներկայացնենք ինչպիսի՞ լուծումներ են տրվել օնլայն ուսուցման ժամանակ առաջացած խնդիրներին** հարցին տրված պատասխաններն՝ ընդհանրացած ձևով՝

Դասախոսներն օգտագործել են բոլոր հնարավոր միջոցները (օնլայն հարթակները,

կայքերը, ինստիտուտի ֆեյսբուքյան էջը, դիմել մասնագիտական ամբիոնների օգնությանը) ուսանողների հետ կապ հաստատելու համար: Կիրառվել են հետաքրքիր ու նոր դասավանդման մեթոդներ:

Ուսանողներին տրամադրվել են էլեկտրոնային դասախոսություններ, ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ գրականության ցանկը: Եթե ուսանողներին չի հաջողվել կապի թույլ լինելու պատճառով միանալ դասին, ապա կատարվել է հետադարձ կապ և ցուցաբերվել անհատական մոտեցում:

Բնականաբար դասախոսները չէին կարող լուծել ուսանողների տեխնիկական խնդիրները, փոխարենը ուսանողների հետ աշխատել են բոլոր հնարավոր միջոցներով՝ անգամ հեռախոսակապի օգտագործմամբ:

Այսինքն, ապահովվել է անհատական շփումը բոլոր ուսանողների հետ: Մեկ շաբաթվա ընթացքում ամբիոնի վարիչների, դեկանների, դասախոսների, ուսանողների, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ղեկավար Գ.Միքայելյանի համատեղ աշխատանքի արդյունքում, մասնավորապես ZOOM հարթակում անցկացվել են դասընթացներ՝ գործիքներին տիրապետելու նպատակով:

Մասնավորեցնենք, թե ինչպիսի՞ լուծումներ են տրվել օնլայն ուսուցման ժամանակ առաջացած խնդիրներին. Մարզական լրագրության ամբիոնում ուսանողները, ինչպես նաև դասախոսները հարմարման գործընթացում, ֆորս-մաժորային պայմաններում յուրացրել են ուսուցման նոր տեխնոլոգիական միջոցները և գործիքները: Ելնելով թե՛ մասնագիտությունից, և թե՛ առարկաներից, նախկինում ևս աշխատել են օնլայն հարթակում /Facebook/ և ունեին արդեն իսկ ձևավորված խմբեր: Ավանդական ուսուցումից առցանց ուսուցմանն անցնելու համար վերակառուցվել է դասընթացի ծրագիրը, ներդրվել են դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումներ:

Ուսանողների առավելագույն ներգրավվածությունը ապահովելու նպատակով տրամադրվել են տարբեր առցանց հարթակներից օգտվելու համար անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներ: Առաջին իսկ օրից աշխատել են հեռուսուցման ZOOM հարթակում՝ փորձելով արագ լուծումներ տալ առաջացած խնդիրներին:

«Գործնական բոլոր թեմաները ադապտացվել են առցանց ռեժիմով դասերին: Նույնիսկ որոշ թեմաների դեպքում առցանց ռեժիմում աշխատանքային գործիքակազմը ավելի լայն է եղել, քան այն կարող էր լինել լսարանային դասերի ժամանակ», - նշել է Սոցիոլոգիայի դասախոս Բ.Ալեքսանյանը:

«Փորձել եմ պարտադիր կիրառել դիդակտիկ նյութեր (ներկայացման տեսքով), ինչը միանշանակ մատչելի է դարձնում դասախոսությունը կամ քննարկումը», - նշել է կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոս Տ.Պետրոսյանը:

Կինեզիոլոգիայի դասախոս Ա.Մուրադյան փորձել է այսպես լուծել խնդիրները. բացի դասախոսություններից նաև անհատական մոտեցում է ցուցաբերվել ուսանողներին, դասավանդվող նյութը տրամադրվել է այլ կապի միջոցներով, ավելի մանրամասն բացատրվել է էլեկտրոնային ծրագրի կիրառման սկզբունքները: Առաջացած խնդիրները հնարավոր է եղել լուծել նկարների, տեսանյութերի ցուցադրման միջոցով նաև «Մերսման հիմունքներ» առարկայի ժամերին:

«Արտասահմանյան մամուլ» առարկայի դասախոս Գ. Մուրադյանի կարծիքով ուսանողների առավելագույն ներգրավվածությունն ապահովելու նպատակով կիրառվել է դասընթացի անցկացման ճկուն ժամանակացույց, ուսանողներին նաև տրամադրվել են առցանց հարթակներից օգտվելու համար անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներ: Բացի այդ անհրաժեշտություն է առաջացել ավանդական ուսուցումից առցանցին անցնելու համար վերակառուցել դասընթացի ծրագիրը, ներդնել դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումներ և ուսանողներին տրվող առաջադրանքների գնահատումը համապատասխանեցնել այդ մեթոդներին, իսկ կապի խնդիրների պատճառով, երբեմն շեղվել են դասացուցակից՝ տեղափոխելով դասընթացի ժամը:

Այսինքն, առցանց ուսուցման ժամանակ ի տարբերություն ավանդական ուսուցման, դասախոսներն ու ուսանողները ստիպված էին լուծել մի շարք խնդիրներ՝ առավել արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու նպատակով (ուսուցման գործընթացի մասնակիցների միջանձնային շփման հետ կապված դժվարությունները, ուսանողների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկությունները և այլն/:

### **3.Ինչ մեթոդներ էք կիրառել հետադարձ կապի ապահովման համար**

Ուսանողների հետ հետադարձ կապն ապահովվել է ինչպես համացանցի (facebook, messenger, viber, WhatsApp), այնպես էլ հեռախոսակապի օգտագործմամբ:

Մինչև դասի մեկնարկը ուսանողներին տրամադրվել են բոլոր նյութերը՝ տեքստեր, վարժություններ, ընթացքում դասախոսները պատասխանել են նրանց հետաքրքրող բոլոր հարցերին:

Այսպես, օրինակ՝ «ԱՖԿ հիմունքներ» և «Գիտահետազոտական մեթոդիկան սպորտում» առարկաների դասախոսները կիրառել են հարցումներ, quizizz, հանձնարարել են առարկայի բովանդակությունից բխող ինքնուրույն աշխատանքներ, որոնք ներկայացվել են սահիկաշարի կիրառմամբ:

Տնտեսագիտության դասին /դասախոս՝ Կ. Քոչարյան/ ուսանողների առաջարկությամբ կատարվել են արդի թեմաների մասին վերլուծություններ, ինչպես օրինակ՝ պանդեմիայի արդյունքում սպորտի և տնտեսության կրած վնասների և դրանց վերացման շուրջ:

«Սոցիոլոգիա» առարկայի դասերին յուրաքանչյուր ուսանողի ուղարկվել է իր ինքնուրույն աշխատանքը՝ գնահատված, համապատասխան շտկումներով և մեկնաբանությամբ, (ուսանողները գնահատման չափանիշներին ծանոթացել էին առաջին դասին, նրանց տրամադրվել էր «Առարկայի նկարագիրը»): Առանձին դեպքերում, ուսանողների հարցերի դեպքում կազմակերպվել է անհատական տեսահանդիպում: Հարցաթերթի լրացում՝ քուիզ է իրականացվել և լրացումից անմիջապես հետո քննարկվել են արդյունքները առցանց դասի ընթացքում:

Հետադարձ կապն ապահովվել է բանավոր և գրավոր առաջադրանքների միջոցով /դասախոս՝ Տ.Պետրոսյան/, էլեկտրոնային փոստի տրամադրմամբ, խմբային հարթակների օգտագործմամբ /դասախոս՝ Ա.Մարտիրոսյան/:

«Արտասահմանյան մամուլ» առարկայի շրջանակում ուսանողների հանձնարարականների շտկման և ուղղումների վերաբերյալ մեկնաբանություններ տրամադրելու համար հիմնականում ցուցաբերվել է անհատական մոտեցում: Ուսանողի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է առաջադրանքը՝ անհրաժեշտ շտկումների վերաբերյալ պարզաբանումներով: Քուիզ (Quiz) առաջադրանքի արդյունքները քննարկվել են դասի ընթացքում և անդրադարձ է արվել յուրաքանչյուրի պատասխաններին: Դասավանդման պրոակտիվ սկզբունքով ուսանողներին տրվել է հնարավորություն մեկնաբանելու միմյանց ճիշտ ու սխալ պատասխանները:

Տեսանյութեր պատրաստելու հանձնարարականների պարագայում տեսանյութը տեղադրվել է խմբում, ուսանողական խմբեր են ձևավորվել և յուրաքանչյուրը խումբ լրագրողական աշխատանքի համապատասխան չափանիշով մեկնաբանել է ավարտուն տեսանյութը, այնուհետև մեկնաբանությունների հատվածում դասախոսն է առաջարկել իր դիտարկումներն ու շտկումները:

Գնահատման է ներկայացվել տեսանյութի վերանայված և վերամոնտաժված տարբերակը:

#### **4.Ինչո՞վ է բացատրվում ուսանողների մասնակցության նվազումը 1-3-րդ շաբաթների ընթացքում:**

Ըստ ուսումնական մասի վիճակագրության և ՈԱԲ-ի կողմից անցկացված հարցումների՝ 1-5-րդ կուրսի ուսանողների մասնակցությունը հեռավար դասընթացներին նվազել է. դասախոսների հարցումներից հասկանալի էր, որ ոչ բոլոր դասընթացների ժամանակ է դա արձանագրվել:

Օրինակ, Աթլետիկայի ամբիոնը նշել է, որ Մասնագիտություն առարկայի դասավանդման ընթացքում նշված ժամանակահատվածում չի նկատվել ուսանողների նվազում:

Ըստ Լեզուների ամբիոնի՝ ընդհանուր առմամբ ուսանողների թիվն ավելացել է և ոչ թե նվազել՝ բացառությամբ մեկ-երկու դեպքերի և դրա համար եղել են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ՝ կապի խնդիր, ուսանողի անպարտաճանաչություն և այլն:

Անատոմիայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնում մինչև Արտակարգ դրություն հայտարարելը գոյություն ունեցող բացակայությունների քանակը գրեթե պահպանվել է:

Սոցիոլոգիայի դասախոսի կարծիքով դասերին ուսանողների մասնակցությունը կարող էր նվազել նաև որոշ աշխատատեղերում աշխատանքը վերսկսելու պատճառով, որոշ ուսանողներ, մի գուցե, «ձանձրացել էին» առցանց ռեժիմում ուսանելուց, մի քանիսի մոտ համակարգիչ/հեռախոսն է տեխնիկական խնդիր ունեցել, որը պատճառ է հանդիսացել դասերին չմասնակցելու:

Կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոս Ա.Մարտիրոսյանը կարծում է, որ բացակայությունը պայմանավորված է եղել ընդհանուր իրավիճակով, որն, ըստ երևույթին, պակասեցնում է ուսանողների հետաքրքրությունը դասերի նկատմամբ: Սակայն, ուսանողների թիվն այդքան էլ չի նվազել, քանի որ արվել է ամեն հնարավորը նրանց մոտիվացված պահելու համար:

Տեխնիկական միջոցներից անդադար օգտվելու հետևանքով արագ հոգնածությունը, նյարդային լարվածությունը, անքնությունը, գլխացավերի առաջացումը՝ որպես բացասական կողմ առանձնացրել է Ֆիզիոլոգիայի ամբիոնը, որն էլ կարող էր մասնակցության նվազման պատճառ լինել:

Լրագրության ամբիոնի դասախոսները նշել են, որ ուսանողներից ոմանք ցանկություն ունեն շարունակել ուսուցումը առկա ձևաչափով ու շատերը դժվարությամբ են համակերպվում առցանց դասընթացի ձևաչափին, ինչը թերևս բացատրվում է տեխնիկական դժվարություններով, գուցե հոգեբանական՝ պայմանավորված մեկուսացումից ելնելու իրավիճակով:

«Մարզական տերմինաբանություն» առարկայի դասերին նշված շաբաթների ընթացքում ուսանողների մասնակցության նվազում չի արձանագրվել: Ինչպես ներկայացվել է դասընթացի ամենշաբաթյա հաշվետվություններում՝ ուսանողների մասնակցությունը կայուն է մնացել, բացի այդ օնլայն հարթակում ավելի շատ ուսանողներ են մասնակից դարձել դասերին, քան առկա ձևաչափում:

«Արտասահմանյան մամուլի պատմություն» դասին նշված շաբաթների ընթացքում ուսանողների մասնակցության նվազում չի արձանագրվել: Ինչպես ներկայացվել է դասընթացի ամենշաբաթյա հաշվետվություններում՝ ուսանողների մասնակցությունը կայուն է եղել:

Անատոմիայի և ԱՖԿ-ի ամբիոնի դասախոսներն այն կարծիքի են, որ դասերին ուսանողների մասնակցության հիմնական պատճառն ուսանողների գերծանրաբեռնված լինելն է՝ կապված տարբեր առարկաներից չափից շատ տրվող հանձնարարականներով, դասերի միջև ընդմիջումների բացակայությամբ, ֆիզիկական հոգնածությունը՝ կապված էլ սարքերի առջև երկար ժամանակ անցկացնելուց, գլխացավը, աչքերի հոգնածությունը, երբեմն ինտերնետ կապի բացակայությունը և գյուղատնտեսական աշխատանքները, իսկ 4-րդ կուրսի ուսանողները հիմնականում զբաղված են եղել իրենց ավարտական աշխատանքներով, ոմանք իրականացրել են մարզչական աշխատանք՝ օնլայն տիրույթում:

**5. Դասավանդման և գնահատման գործընթացում ի՞նչ նորամուծություններ եք իրականացրել** հարցին հարցված ամբիոնները տրամադրել են հետևյալ տեղեկատվությունը՝

Աթլետիկայի ամբիոնում ուսանողների գնահատման համար նախատեսվել է կիրառել օնլայն հարց-պատասխան կամ հնարավորության դեպքում անհատական և խմբային օնլայն թեստավորում:

Լեզուների ամբիոնն ընտրել է շատ հետաքրքիր տեքստեր, դիդակտիկ նյութեր դասավանդվող թեմաների վերաբերյալ, օրինակ՝ «Աշխարհի յոթ հրաշալիքները»: Շաբաթ և կիրակի օրերին անցկացվել են անհատական լրացուցիչ պարապմունքներ թույլ ուսանողների համար և բոլոր նրանց համար, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել մասնակցել դասերին:

Անատոմիայի և ԱՖԿ-ի ամբիոնի դասախոսները դասավանդման մեջ կիրառել են շրջված և դերային դասի մեթոդները, ինչպես նաև նկարահանել են հակիրճ տեսաֆիլմեր: Գնահատումը կատարվել է հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր բաժնի ավարտին ուսանողներին տրվել են անհատական թեստեր և ստուգվել են. որոշ դասախոսներ ստուգումը կատարել են նախապես տրամադրված հարցաշարով:

Տնտեսագիտության դասերին մագիստրանտների և չորրորդ կուրսի ուսանողների համար կազմակերպվել են բաց դասեր ֆեդերացիաների և մարզական այլ կառույցների մասնագետների հետ:

Սոցիոլոգիայի դասերին ցուցադրվել են ներկայացումներ (PPT presentation), տեսանյութեր, ինչպես նաև ուղիղ ռեժիմում Screen share-ի միջոցով ուսանողները սովորել են որոշ ծրագրերից օգտվել: Բացի այդ լրացվել է հարցաթերթիկ՝ քուիզ (Google Forms-ի միջոցով)՝ նպատակն ունենալով պարզել՝ որքանով են ուսանողները յուրացրել նախորդ առցանց դասախոսությունների թեմաները: Իրականացվել է նաև խմբակային աշխատանք Zoom հարթակում:

Հեռավար ուսուցման «Ամենաակտիվ և ամենապասիվ ուսանող» մրցույթ է կազմակերպել կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոս Ա. Մուրադյանը, նույն ամբիոնի դասախոս Ա. Օհանջանյանը նշել է, որ պատրաստվում է բանավոր սեմինար հարցումը փոխարինել օնլայն թեստային առաջադրանքով՝ ստուգելու և օբյեկտիվ գնահատելու յուրացված գիտելիքները:



Լրագրության ամբիոնի դասախոսները կիրառել են օնլայն վիկտորինաներ: Յուրաքանչյուր թեմային առնչվող սլայդը պատրաստվել է ամենայն մանրամասնությամբ՝ տեսական նյութին գումարվել են գործնական օրինակներ, լուսանկարներ, պատկերավոր առաջադրանքներ: Թեմային առնչվող տեսանյութերը ուսանողներին ուղարկվել են նախապես:

Լրագրության ամբիոնի դասախոս Գ.Մուրադյանի կարծիքով դասավանդումն առցանց ձևին հարմարեցելու համար կարևորվել են դասավանդման նոր, բայցև ուսանողի համար մատչելի միջոցների կիրառումը: Հարկավոր է ընդգծել, որ կիրառվող մեթոդները, ինչպես օրինակ՝ քուիզ, տեսագրքերի դիտարկում, տեսադասախոսությունների քննարկում, էլեկտրոնային դասախոսությունների տրամադրում, ավանդական ուսուցման գործընթացում ևս արդյունավետ կերպով գործարկվել են: Դասավանդման ընթացքում իբրև նորամուծություն կիրառվել է առցանց տիրույթում խմբային workshop (աշխատաժողով) մեթոդը. ներկայացվել է առաջադրանքը, պարզաբանվել է՝ ուսանողից ինչ է պահանջվում, սահմանվել է ժամանակ, այնուհետև քննարկվել են աշխատանքի արդյունքները: Այս մեթոդը հետաքրքրությամբ է ընդունվել ուսանողների կողմից և օգնել է զարգացնել թիմում աշխատելու, միմյանց հետ համագործակցելու, հակադիր կարծիքներին փաստարկումներով պատասխանելու ուսանողների կարողությունները:

Օնլայն քուիզ առաջադրանքների գնահատման համար կիրառվել է էլեկտրոնային գնահատման ձևաչափը. պատասխանները տրամադրվել են ուսանողներին՝ գնահատման թափանցիկությունն ապահովելու համար: Իսկ ստեղծագործական և հետազոտական աշխատանքների համար սահմանվել են գնահատման հստակ չափանիշներ և բաղադրիչներ, ինչպես օրինակ՝ ներկայացված փաստերի ամբողջականություն, մատչելի ու պարզ խոսք, համեմատական վերլուծությամբ արված եզրակացություններ և այլն:

Հիմնական նորամուծությունը դասերն ավելի երկար անցկացնելու հնարավորությունն էր (ինստիտուտում դասի տևողությունն ավելի կարճ էր): Այն ուսանողներին ավելի շատ արտահայտվելու և տվյալ թեմայի շուրջ ավելի ծավալուն քննարկումներ անցկացնելու յուրօրինակ առիթ էր /Լրագրության ամբիոն/:

«ԱՖԿ հիմունքներ» առարկայի դասախոսների կարծիքով օնլայն ուսուցումն արդեն իսկ նորամուծություն է մեր կրթական գործընթացում: Նորամուծություն է նաև գնահատման quizizz տարբերակը և շրջված լսարանը՝ նախատեսված թեմայի 10-15 րոպե ձայնագրության կիրառմամբ:

Կենսամեխանիկայի դասախոս Մ.Ներսիսյանը դասավանդման գործընթացի նորամուծություն է համարում դասախոսության նյութը նախապես ուսանողներին ուղարկելը, ինչն էլ համարել է ռացիոնալ դասավանդման տարբերակ:

«Ընդհանուր և հատուկ մանկավարժություն» առարկայի հեռավար դասավանդման վերաբերյալ ԱՖԿ-ի ամբիոնի դասախոս Ա.Գաբրիելյանի կարծիքով դասախոսության ընթացքում օնլայն հարթակը թույլ է տալիս տեղում օգտվել Google, YouTube, Facebook և

այլ հավելվածներից՝ ավելի ակնառու դարձնելու դասավանդվող նյութը, ընդլայնելու գիտելիքների շրջանակը, քննարկելու ամենաթարմ տեղեկատվությունը:

Այսինքն, դասախոսների խնդիրը ոչ թե նոր մեթոդների ներդրման հարցն էր, այլ այդ մեթոդները առցանց ռեժիմում անցկացվող դասին առավելագույն նպատակային օգտագործելը, քանի որ չկար ուղիղ շփում ուսանողի հետ և շատ հաճախ կապի խոտանի պատճառով ուսանողները դժվարանում էին ակտիվորեն հաղորդակցվել միմյանց հետ:

**6. Լրացնելով հարցաթերթիկը՝ դասախոսները ներկայացրել են նաև իրենց առաջարկությունները** հեռավար ուսուցման բարելավման վերաբերյալ: Ներկայացնենք դրանք.

Արտակարգ իրավիճակի պայմաններում օնլայն հարթակում դասերը կազմակերպելն այլընտրանք է և ուսումնական տարին չձախողելու հնարավորություն:

Ճիշտ է, ստեղծված իրավիճակը իրականում մեծ դժվարություններ առաջացրեց, բայցև խթանեց դասավանդման մոտեցումների վերաճումն ու վերակազմակերպումը, ներդրվեցին նոր ու առավել հետաքրքիր մեթոդներ՝ ընձեռելով կուտակված լավ փորձը զարգացնելու հնարավորություն:

Նույնիսկ Արտակարգ իրավիճակի չեղարկման պարագայում, երբեմն ցանկալի է անցկացնել հեռավար դասեր (դասախոսների և ուսանողների ցանկությամբ), բուռն իրականացնել խթանող քայլեր ու գործողություններ՝ ավանդական ուսուցման գործընթացում այդ նորարարությունների ներդրման համար, որը մեր բուհի դեպքում կմեծացնի ուսանողների ներկայությունը, և հնարավորություն կտա բարձրացնել ուսանողների բազմաուղրոտ գիտելիքների մակարդակը: Բացի այդ, եթե վերոհիշյալ ֆորմատով դասերն անցկացնելու պարտադրված իրավիճակ ստեղծվի, ապա դասախոսական և ուսանողական կազմն ավելի պատրաստված կլինի, իսկ հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպման և անցկացման նպատակով կազմակերպել *արագընթաց* վերապատրաստման դասընթացներ դասախոսների շրջանում:

Տարեվերջյան քննությունների արդյունավետ անցկացման համար, եթե դարձյալ անհրաժեշտություն կլինի այն հեռավար անցկացնել, կազմակերպել քննարկումներ դասախոսների հետ՝ նկատի ունենալով ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման օբյեկտիվության ապահովումը:

## **Ամփոփում**

Ամփոփելով ՖԴԱՏ ֆակուլտետի դասախոսների կարծիքների վերլուծությունը հեռավար դասընթացների անցկացման վերաբերյալ՝ նախ նշենք, որ դասախոսներին տրված 6 հարցից բաղկացած հարցաթերթիկներում ներառված հարցերով հնարավոր էր պարզել՝

- դասախոսների հեռավար ուսուցման կազմակերպման ընթացքում ինչ խոչընդոտներ, դժվարություններ են եղել,

- ինչպես են հաղթահարվել խնդիրները, դրանց լուծում տրվել է, թե՞ ոչ:
- օնլայն ուսուցման ժամանակ հետադարձ կապի ինչ մեթոդներ են կիրառվել,
- ինչո՞ւ է նվազել ուսանողների մասնակցությունը 3-4 շաբաթների ընթացքում,
- օնլայն դասավանդման ընթացքում ինչ նորամուծություններ են կիրառվել:

Քանի որ հեռավար ուսուցումը փորձություն էր ոչ միայն բուհի, դասախոսների, այլ ուսանողների համար, հետևաբար խնդիրներ չէին կարող չլինել, իսկ խնդիրները, ինչպես նկատեցինք, հիմնականում կապված էին տեխնիկական միջոցներից օգտվելու (անխափան աշխատող համացանցային կապի բացակայություն, տեխնիկական միջոցների անհասանելիություն), ուսանողների ինքնակազմակերպման, նոր միջավայրին հարմարվելու, ինչպես նաև որոշ գործնական դասերի անցկացման բարդությունների հետ: Խնդիրները որոշ չափով հարթվել են դասախոսի կողմից յուրաքանչյուր ուսումնառողին անհատապես աջակցություն ցուցաբերելու դեպքում, սակայն դեռևս ամբիոնների կողմից լրացուցիչ պարզաբանումներ չեն արվել անհրաժեշտության դեպքում նոր ուսումնական տարին հեռավար ուսուցմամբ իրականացնելու դեպքում առցանց ուսուցման հասանելիությունը պարզելու նպատակով:

Հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ անցկացված առցանց ուսանողական հարցման արդյունքների վերլուծությունից պարզ էր, որ ուսանողներն ու դասախոսական կազմը մեծ պատրաստակամություն և պատասխանատվություն են ցուցաբերել հեռավար ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար, սակայն ըստ այդ հարցումների, ինչպես նաև ըստ ֆակուլտետի հարցման արդյունքների ու դասախոսների առաջարկությունների, հասկանալի է, որ այդ արդյունավետությունը բազմակողմանիորեն ապահովվելու համար երկու կողմերն էլ ունեն համապատասխան աջակցության կարիք:

Ինչպես երևում է վերլուծությունից, յուրաքանչյուր դասաժամ դիտարկվել է որպես տվյալ ֆորմատով դասընթացներն ավելի արդյունավետ անցկացնելու հնարավորություն: Թե դասախոսները, թե ուսանողները հետզհետե ադապտացվել են նոր ձևաչափին:

Ուսանողների մասնակցության վերաբերյալ հարցված դասախոսների պատասխաններից հասկանալի էր, որ ուսանողների թիվը հիմնականում մնացել է կայուն, իսկ եթե նվազել է, ապա պատճառները նույնպես պետք է հաշի առնել հետագա դասաարոցեսը կազմակերպելիս:

Հաշվի առնելով Բոլոնիայի գործընթացի պահանջները, կարևորելով ուսանողա-կենտրոն ուսուցումը՝ բուհն արդեն որոշակի քայլեր էր ձեռնարկել դասավանդման և ուսուցման նոր մեթոդների կիրառման առումով, իսկ հեռավար ուսուցումը հնարավորություն էր՝ ընդլայնելու խառը ուսուցման (blended learning) մեթոդի կիրառման հնարավորությունները՝ կիրառելով համացանցի հնարավորությունները և օնլայն հարթակները:

## **Առաջարկություններ**

1. Հեռավար ուսուցման առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կիրառել պարզ և հասանելի հարթակներ (օրինակ՝ Google classroom, ZOOM, ...):
2. Վերապատրաստել աշխատակազմին հարթակների կիրառության համար:
3. Վերանայել ուսանողներին տրվող հանձնարարությունների բովանդակությունը/կառուցվածքը՝ հաշվի առնելով գնահատման և վերջնարդյունքների կապը, ուսումնառության տարբեր ձևերի և կարիքների համար նախատեսված ռեսուրսները:
4. Հեռավար ուսուցման պայմանների վերաբերյալ տրամադրել ուղեցույցներ թե՛ դասախոսներին, թե՛ ուսանողներին:
5. Ցանկալի է, որ յուրաքանչյուր դասախոս իր առարկայի շրջանակում թեմայի կամ մոդուլի ավարտին անցկացնի ուսանողների հարցում՝ հասկանալու համար նրանց կարծիքը դասընթացի վերաբերյալ:
6. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, հստակ նկարագրել ուսանողներից ակնկալվող արդյունքները հաղորդակցման նոր պայմաններում, և դրանք համապատասխանեցնել ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին:

**Որակի ապահովման բաժին**